

Դուրզեց Սեվակ

ԱՐԵՎԵԼԱՆԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՊԵՐԻՈԴԻԶԱՅԻՆ¹

Ձեռնարկելով արևելահայ գրական լեզվի պատմության ուսումնասիրությանը լեզվական բավական առատ տվյալների հիման վրա և հրեթացալոյ աշխատանքի տարիներ շարունակ, սկսած 1932—33 ազդեցիկական տարվանից, Երևանի բուհերում (Պետական լսարան, Մանկերկրատուն) դասավանդելով ժամանակակից հայոց լեզվի տեսությունը, որի ներածական գլուխներից մեկը նվիրված է հենց այդ լեզվի կազմավորմանն ու պատմությանը՝ ես միշտ զգացել եմ, թե որքան դժվարանում է իմ հետազոտական աշխատանքը այն բանի հետևանքով, որ մենք տակավին չունենք հայոց կամ Հայաստանի անտեսական-քաղաքական պատմության, ինչպես և հայ գրականության պատմության հանգամանակից, ճանաչված պերիոդիզացիան (պարբերացում)։ մանավանդ այն դարերի համար, որոնք առնչվում են ինչ զբաղեցնող առարկայի՝ արևելյան գրական հայերենի սկզբնավորման, կազմավորման ու գոյի հետ։

Հնդգրկման առարկայի պատմության պերիոդիզացիան յուրաքանչյուր պատմական դիպքիպիսի առաջնահերթ ու վճռական խնդիրներից մեկն է։ Բխելով փաստական նյութերի ուսումնասիրությունից՝ պարբերացումը իր հերթին նպաստում է առարկայի պատմական զարգացման ընթացքը լուսաբանելուն։ Առհասարակ առանց պերիոդիզացիայի, մանավանդ առանց մեթոդոլոգիայիպես ճիշտ պերիոդիզացիայի, պատմական դիպքիպիսի լուսաբանության փելիորեն վերածվում է դեպքերի, երևույթների ներքին դիալեկտիկական կապակցություններն ու միջնորդավորումները չդրսևորող շուրջ ժամանակագրության կամ փաստագրության, Հասարակական բազիսի վրա բարձրացած վերնաշենքային բոլոր արտահայտությունների պատմության պերիոդիզացիան անխուսափելիորեն պետք է հենվի, թեկուզ և հռավորապես կամ վերջին հաշվով, նույն այդ բազիսի զարգացման պատմության վրա։ Վերին աստիճանի դժվար, եթե չասենք՝ անկարելի է կառուցել որևէ գաղափարախորհրդական արտահայտության պարբերացում հասարակության տնտեսական-քաղաքական, քաղաքացիական պատմության պերիոդիզացիայի չգոյության պայմաններում։

Լեզուն հասարակական գիտակցության ձևերից մեկն է՝ վերնաշենքային արտահայտություն, որը հաճախ այլ գաղափարախոսություններից շատ ավելի շուտ և զգայուն կերպով է արտահայտում բազիսում տեղի ունեցող փոփոխություններն ու տեղաշարժները՝ վերջին հաշվով պայմանավորված լինելով նրանցով։ Ելելով պատմություն = մտքի պատմություն հանճարեղորեն նկատել է Լենինը իր փիլիսոփայական տեսություններից մեկում, Հասարա-

¹ Տպագրվում է մտքերի փոփոխության կարգով (Յժրագրական հրեզիտ)։

կական յուրաքանչյուր ֆորմացիայի օրինաչափորեն ուղեկցում է լեզվական համապատասխան «ֆորմացիա» կամ գոյավիճակ, այսինքն հասարակական եազորդակցման, մտածողության և գիտակցության առանձնահատուկ սխտեմ (իհարկե ոչ քերականական սխտեմի իմաստով)։ Այսպես, ֆեոդալական հասարակության մեջ գոյութուն ունի էթնիկական դրական լեզուանտարբերորեն իրեն հակադիր գեղջկական բարբառներով, կապիտալիստական հասարակության մեջ՝ ազգային դրական լեզու, բարբառների թափանցումով նրա մեջ և ակտիվ գիմադրությամբ, սոցիալիստական հասարակության մեջ՝ համազգային դարձող ազգային դրական լեզու, բարբառների պասիվ գիմադրությամբ ու արագաթափ անգոյացմամբ և այլն։ Ավելորդ չի լինի հիշեցնել նաև այն, որ դասակարգային հասարակության ներսում ընդհանուր դրական լեզուն տրոհված է ըստ բովանգակության տարբեր զասակարգային լեզուների։ Լեզվական «ֆորմացիաների» տարբերությունները որոշ շրջաններում կարող են լինել քերականական, բառապաշարային, հնչյունական և այլն, ինչպես օրինակ գրաբարի և աշխարհաբարի միջև։ Որոշ շրջաններում՝ գերազանցապես դադափարախոսական, իմաստաբանական-բովանգակային, ինչպես օրինակ նախասովետական և սովետական դրական լեզուների միջև։

Որ դրարարը հայոց լեզվի տարրեր «ֆորմացիա» է, իհարկե ընդունում են բոլորը։ Սակայն արդյոք շատերն են հաշտվում այն մտքի հետ, որ մեր արևելյան դրական հայերենը լեզվական նոր «ֆորմացիա» է նախասովետական հայերենի համեմատությամբ։ չէ՛ որ քերականությունը նույնն է, բառապաշարը՝ համարյա նույնը, արտասանությունը՝ նմանապես։ Սակայն համեմատության համար վերցնենք մի այսպիսի նախադասություն։ «Ճակատային հողամասերում աչքի են ընկնում կոխողի երեք բրիդազաներ, որոնք իրենց ստախանովական աշխատանքի շնորհիվ մշտապես գերակատարում են օրվա պլանը։ այդ բրիդազաների անգամներից յուրաքանչյուրը վաստակում է օրական 3—4 աշխօր»։ Հասկանալի՞ էլինի սա, պայմանականորեն ասած՝ նախասովետական հայի, մեր հասարակակարգին ու կենցաղին անծանոթ հայի համար։ Սխալված էլինենք, եթե ասենք, թե անհասկանալիությունը պայմանավորված է կոխող, ստախանովական, բրիդազա նոր բառերով, որովհետև եթե այդ բառերը փորձենք փոխարինել իրենց զուտ հայերեն համարժեքներով կամ հոմանիշներով, հասկանալիությունը շատ չի ավելանա, և այդ պայմանական նախասովետական հայը, եթե նույնիսկ լինի լավագույն հայագետներից մեկը, դարձյալ տարակուսանքով պիտի կարդա և համարյա ոչինչ չհասկանա հետևյալ արտահայտությունից։ «Ճակատային հողամասերում աչքի են ընկնում համայնական տնտեսությամբ երեք հարվածային ջոկատներ, որոնք, իրենց բարձր արտադրողական աշխատանքի շնորհիվ մշտապես գերակատարում են իրենց օրվա ծրագիրը։ այդ ջոկատի անգամներից յուրաքանչյուրը օրական վաստակում է 3—4 աշխատանքային օր»։ Անվիճելի է, որ «ճակատային հողամաս», «հարվածային ջոկատ», «օրվա ծրագիր», «գերակատարել», «վաստակել», «աշխատանքային օր» կամ «աշխօր» հայերեն բառերը նույնպես մեծ չափով անհասկանալի պիտի մնան այդ հայի համար, այն հայի համար, որը կոխողը թարգմանում է լեզուական, ֆինանսների ժողովրդական կոմիսարը՝ ելեմտից նախարար և այլն։ Այսպիսով լեզվական «ֆորմացիա» ասելով մենք

չենք պատկերացնում լեզվական-քերականական սխտեմ կամ միայն լեզվական-քերականական սխտեմ, այլ ինչպես արդեն ասել ենք՝ եռարակական եռարակական, մտածողութեան և գիտակցութեան սխտեմ:

Յուրութեան շարժումը հասարակութեան ընդերքում ծնվող և նախապես ստորագրի վիճակում գտնվող լեզվական ֆորմացիան կամ զարդանում, բարձրանում և գերիշխող դիրքի է հասնում, կամ երկարատև իրավագրութեան դատապարտվում և կամ մահանում՝ անխուսափելիորեն ի հետևանք իրեն ծնող և կրող դասակարգի պատմական ճակատադրի: Լեզուների զարգացումը և տեղաշարժները արդյունք են հասարակութեան ներսում գոյութուն ունեցող ներհակ դասակարգերի ու դասերի խոսվածքների, բարքառների ու լեզուների հակադրամիասնութեան, նրանց պայքարի: Դրարարի ու բարքառների դարավոր պայքարը, միջին հայերենի հախուռն վերելքն ու ժամանակավոր էքսպանսիան 13--15-րդ դարերում, աշխարհաբարի ու գրարարի անդիջող պայքարը և աշխարհաբարի հաղթանակը լավագույն հավաստումը կարող են լինել վերը ասածի: Սակայն աշխարհաբարի հաղթանակը բնավ չէր նշանակում լեզվական պայքարի ավարտ, որովհետև աշխարհաբարը ևս, լինելով դասակարգային հասարակութեան լեզու՝ ենթակա էր զարգացման նույն օրենքներին:

Աշխարհաբար ասելով հասկանում ենք հայոց ազգային գրական լեզուն՝ ազգորեն կազմակերպված հայ հասարակութեան գրական լեզուն: Յուրութեան շարժումը ազգային գրական լեզու կազմավորվում է ազգային հասարակութեան առաջացման հետ մեկտեղ, ֆեոդալիզմի քայքայման և բուրժուազիայի առաջացման պայմաններում՝ հանդիսանալով ազգութունը բնորոշող չորս հատկանիշներից մեկը: Ազգը պատմականորեն կազմավորված կույն և անբույն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և պոլիտիկական կերտվածքի, որն արտահայտվում է կուլտուրայի եանբույն մեքի՝ (Ստալին):

Այստեղից բխում է, որ լեզվի հանրութունը ընդհանուր լեզուն, կամ ազգային լեզուն պատմական կատեգորիա է՝ կապված ազգի կազմավորման բարդ պրոցեսի հետ: Ինչպես որ ազգը միանգամից չի ձևավորվում ու կազմավորվում, այլ արդյունք է պատմական ավելի կամ պակաս երկարատև պրոցեսի, որը առաջ է տարվում բարձրացող կապիտալիզմի ուժերի և քայքայվող, տեղի տվող ավատականութեան ուժերի հակամարտութեամբ, այնպես էլ ազգային լեզուն չի ստեղծվում կամ ծագում միանգամից:

Ազգային լեզուն սաղմնավորվում է դեռևս ֆեոդալական հասարակութեան ներսում, կապիտալիզմի ընձյուղների երևան գալուն և աճելուն զուգընթաց: Արհեստավորական և վաճառահան քաղաքների առաջացումը, աշխույժ քաղաքացութեան (բուրժուականութեան) և բուրժուազիայի հրապարակ բարձրանալը արդեն անհրաժեշտ են դարձնում գրականութեան և լեզվի աշխարհականացումը՝ նոր մատչելի լեզվի ստեղծումը, որն աստիճանաբար դառնում է ազգային լեզու: Այդ նոր՝ ազգային լեզուն իր հերթին զգալի չափով նպաստում է բուրժուազիայի հաղթանակին, ազգային զարթոնքին և ազգային վերածնութեանը, որի համար ի հարկե անհրաժեշտ են

¹ Ի. Ստալին. — Մարքսիզմը և ազգային-զաղաթային հարցը. Երևան, 1938 թ., էջ 15:

ազգութեան մյուս կարևոր գործոններն էլ՝ տերիտորիայի, տնտեսական կազմի և հոգեբանական կերտվածքի հանրութիւնը՝

Ընդհանրապես ազգը և մանավանդ ազգային լեզուն պատմականորեն ձևավորվել են «այն նշանակալից զարաշրջանում, — գրում է Էնգելսը, — որը մենք՝ գերմանացիներս, այն ժամանակ մեր գլուխը եկած ազգային զօրախառնութեան կապակցութեամբ կոչում ենք Ռեֆորմացիա, Ֆրանսիացիք՝ ռենեսանս, իսկ իսլամացիք՝ կվինկվեշենաո, և որի բովանդակութիւնը չի սպառնում այդ անվանումներից և ոչ մեկով։ Իս 15-րդ դարի երկրորդ կեսից սկսվող զարաշրջանն է։ Թագավորական իշխանութիւնը հենվելով քաղաքացութեան վրա՝ ընկճեց ֆեոդալական ազնվականութեան դորութիւնը և հիմնեց խոշոր, ըստ էութեան ազդային միապետութիւններ, որոնց յիշեց զարգացումն ստացան ժամանակակից եվրոպական ազգերը և ժամանակակից բուրժուական հասարակութիւնը»¹։

Ազգային լեզվի կազմավորման պրոցեսը երբեմն կարող է այս կամ այն չափով առաջ ընկնել կապիտալիստներն զարգացած ու ձևավորված ազգի կազմավորման պրոցեսից, ինչպես այդ տեսնում ենք իտալերենի (14—15-րդ դարեր), ռուսերենի (17—18-րդ դարեր) և մանավանդ հայերենի օրինակով։ Ազգային լեզվի կազմավորման պրոցեսը երկարատև, հաճախ դարեր ձգվող պայքարի պրոցես է կամ գերիշխանութեան ձգտող տարբեր բարբառների միջև (օրինակ Իտալիայում), կամ իշխող հին գրական լեզվի և նոր կազմավորվող ազգային լեզվի միջև (լատիներենի ու ֆրանսերենի, հին-սլավոներենի ու ռուսերենի, գրարարի ու աշխարհարարի) և կամ ազգային լեզվի ու բարբառների միջև՝ արգեն ազգային լեզվի հաղթանակից հետո։

Նայած տվյալ հասարակութեան տնտեսական, քաղաքական, պետական և ազգային հանգամանքներին, այդ պայքարը կարող է ընդունել ամենաբազմազան արտահայտութիւններ՝ մերթ կրոնական, մերթ տերիտորիալ, մերթ քաղաքական անկախութեան ձգտման, մերթ լեզվական երանգավորում։ Ահա թե ինչպես է նկարագրում ընկեր Ստալինը այն հանգամանքները, որոնք պայքարի էին մղում Եվրոպայի արևելքի երիտասարդ ազգերին։

«Պայքարն սկսվեց և բորբոքվեց իսկապես ոչ թե ամբողջութեամբ առած ազգերի միջև, այլ իշխող ու ետ մղված ազգերի տիրապետող դասակարգերի միջև։ Պայքարը մղում են սովորաբար կամ ճնշված ազգի քաղաքային մանր բուրժուազիան՝ իշխող ազգի խոշոր բուրժուազիայի դեմ (չեխերն ու գերմանացիները), կամ ճնշված ազգի գյուղական բուրժուազիան տիրապետող ազգի կալվածատերերի դեմ (ուկրաինացիները Լեհաստանում), կամ ճնշված ազգերի ամբողջ ազգային բուրժուազիան իշխող ազգի կառավարող ազնվականութեան դեմ (Լեհաստանը, Լիտվան, Ուկրաինան՝ Ռուսաստանում)։

Բուրժուազիան գործող զլխավոր անձն է»²։

Այդ պայքարը, ինչպես հայտնի է, համառ է ու տեական, սակայն հաճախ պետական-քաղաքական, տնտեսական բնույթի հետ մեկտեղ ստանում է ներազգային լեզվական պայքարի բնույթ՝ ունենալով ոչ պակաս

¹ К Маркс и Ф. Энгельс—Сочинения, т. XV, էջ 475.

² Ի. Ստալին, Նույն տեղը, էջ 22.

դաժան ու սուր կերպարանք և առաջացնելով գրոհող ու պաշտպանվող դասակարգերի խոշոր բախումներ միննույն ազգի ներսում: Լեզվի շուրջը այդպիսի սուր բախումներ անդի ունեցան հատկապես հայ իրականութեան մեջ, բախումներ, որոնք առանձնապես կազմակերպված բնույթ ստացան 19-րդ դարի կեսերին՝ զրաբարյանների և աշխարհաբարյանների միջև: Հայոց ազգային գրական լեզվի երկունքը, կազմավորումը և հաղթանակը ուղեկցվել են լուռ կամ բացահայտ զրապայքարով: Հայոց ազգային գրական լեզու հանդիսացավ զրակեմ ժշտօրինաբար, որը պատմականորեն հաջորդեց հայ ֆեոդալական հասարակութեան գրական լեզու զրաբարին՝ գտնվելով ավելի բախտավոր պարագաներում, քան միջին-հայերենը, որը 13—15-րդ դարերում, իբրև հետևանք մեր վաղ վերածննդի, իր սոցիալական ֆունկցիաներով բարձրացավ զրաբարի համեմատությամբ ավելի բարձր աստիճանի և բունեց ազգային գրական լեզու դառնալու ուղին, սակայն Հայաստանի տնտեսական-քաղաքական դարդացման հետագա ընդհատման և մեր հասարակութեան վերաֆեոդալականացման հետևանքով կիսակատար թողեց յուր էվոլյուցիան՝ մնալով կիսա-ֆեոդալական կիսա-ազգային լեզվի մակարդակի վրա և ապա իր ֆունկցիաների մեծ մասը վերստին դիմեց զրաբարին, որն իր նույնիսկ ազնատ, աղավաղ, լատինականացած որակով հանդերձ մնաց գերիշխող դերում 15—17-րդ դարերի ընթացքում: 17—18-րդ դարերը, որոնք կարող են կոչվել մեր երկրորդ վերածննդի սկիզբը, արդյունավորեցին մի կողմից՝ զրաբարի, կլասիկ զրաբարի վերածնունդը և մյուս կողմից՝ ազգային գրական աշխարհաբարի ծնունդը: Այսպիսով զառամյալ զրաբարը, թարմացած ու զինված նոր գեներացիայով և լայն էքսպանսիայի միտումներով՝ կանգնեց բողբոջող աշխարհաբարի դեմ իբրև անողորմ մրցակից ու ախոյան նրա օրորոցային իսկ շրջանում՝ ունենալով մի շարք լուրջ առավելություններ նրա համեմատությամբ: Նշենք այդ առավելությունները:

1. Գրաբարը իր թիկունքում ուներ դարավոր հայ գրականութեան, որը խոշոր գործոն էր թե ազգային-հայրենասիրական դաստիարակության և թե կուլտուրայի ու լուսավորության համար ընդհանրապես:

2. Գրաբարը կազմակերպված, հասուն, հղկված ու ճկուն լեզու էր, անցած զարավոր մշակույթի բովից, մինչդեռ աշխարհաբարը տակավին համարյա միայն բանավոր լեզու էր. անմշակ թոթովուն ու խայաարգես:

3. Գրաբարը ընդհանուր լեզու էր հայութեան համար, որը եկեղեցու հետ ձեռք ձեռքի տված հանգես էր զալիս որպես ամբողջ աշխարհում սփռված հայութունը շաղկապող մեծագոր գործոն: Մինչդեռ սկզբնավորվող գրական աշխարհաբարը անմիօրինակ էր և ընթանում էր երկու տարբեր հսկերով, որոնք կարճ ժամանակից հետո նրան պիտի վերածեին երկու ճյուղի կամ երկու լեզվի:

Տերիտորիապես, քաղաքականապես և կուլտուրական կողմնորոշումով, ինչպես և ստնտու բարբառներով երկատված հայ հասարակութունը՝ արևելահայութունը ու արևմտահայութունը իր ազգային կազմավորումը կատարեց երկփեղկված և դրա հետևանքով ստեղծեց երկնյուղ ազգային գրական լեզու կամ ավելի ճիշտ՝ երկու ազգային գրական լեզու՝ արևելահայ և արևմտահայ աշխարհաբար գրական լեզուներ, որոնք կոչվում են նաև գրական բարբառներ: Սրանք իրենց ֆորմացիայի և ակունքների մեծ նմանություններ

բով, փոխադարձ ուժեղ կամ թույլ ներազդեցություններով հանգերձ, ունեն
րենություն ու պատմական հակաազդի խոշոր տարբերություններ, ուստի և
ենթակա են առանձին ուսումնասիրության։

Սակայն ավելորդ չի լինի այստեղ պարզել մի կարևոր հանգամանք.
որոշ ընկերներ ինչ-ինչ պատճառներով ու նկրտումներով չընդունելով, որ
գրաբար և աշխարհաբար տարբեր լեզուներ են, չեն ընդունում նաև այն,
որ արևմտյան ու արևելյան գրական աշխարհաբարները նույնպես տարբեր
լեզուներ են։ Այդպես գատողների միակ ելակետը և վախճանակետը ազգա-
յին միասնության գաղափարն է և այն պնդումը, թե հայերս մեկ ազգ են
ուրեմի և ունեն մեկ լեզու ու գրականություն։ Ազգային լավասեսության
խրենց ակնոցներով դրանք ցամաքալից, իդեալական տեսում են իբրև իրա-
կան, մինչդեռ իրականությունն այն է, որ չհաշված գրաբարն ու միջին
հայերենը, որոնք անվիճելիորեն տարբեր լեզուներ են, տարբեր լեզուներ
են հանդիսանում նաև մեր արևելյան ու արևմտյան աշխարհաբարները ես։

Տեսնենք, թե ինչ են ասում այդ մասին հայոց լեզվի ամենախոշոր
հեղինակությունները.

«Հայոց լեզուն ունի մի ուրիշ անհարմարություն. — գրում էր Նիկողա-
յոս Մառը 1922 թվին, — հայոց ազգային լեզուները երկուսն են՝ փոքրասի-
ական (արևմտահայոց — Գ. Ս.) և կովկասյան (արևելահայոց — Գ. Ս.) և
այժմ հայերի հոգսն է միասնական ազգային լեզու ստեղծելը...»¹

«Հայերը 19-րդ դարում հիմնեցին երկու տարբեր գրական լեզուներ,
որոնք իր-իր բավականին մոտ են, — գրում էր Մեյեն 1920 թվին, — այդ
երկու լեզուները՝ հիմնված են լեզվի ներկա վիճակի վրա»²

«... Կատարվեց վերջապես տխուր բաժանումը, — գրել է Հր. Աճառյանը,
1906 թվին իր «Պատմություն հայոց նոր գրականության» մեջ, — և ձևա-
ցան հայ ազգի մեջ երկու գրական լեզուներ և երկու գրականություն՝ տրե-
վելյան և արևմտյան»³

Սրանով այո հարցը սպառված համարելով և արևմտահայ գրական
աշխարհաբարի պատմության քննությունը ուրիշներին կամ այլ անգամվա
թողնելով՝ անցնում եմ նյութի շարունակությանը։

Արևելյան գրական աշխարհաբարի ծագումն ու պատմությունը մինչև
այժմ ընդունված է եղել կապել 19-րդ դարի մեր լուսավորիչներ Աբովյանի,
Նազարյանի ու Նալբանդյանի հետ, ավելի ճիշտ՝ մեր նոր գրականության
ակզրնավորության հետ, ըստ որում իբրև ուղեցույց ու առաջնորդ այդ
հարցում ծառայել է այն միանգամայն սխալ սկզբունքը, թե գրական լեզու
նշանակում է գրականություն, այսինքն՝ զեղարվեստական գրականության
լեզու։ Իհարկե, գրականությանը, զեղարվեստական արձակին ու չափածո-
յին ծառայելը գրական լեզվի ֆունկցիաների մեջ բունում է կարևոր տե-
ղերից մեկը. բայց և այնպես այդ ֆունկցիան բնավ չի կարող վճռական
լինել գրական լեզվի հակառակորդ կամ հանաչման համար, մանավանդ նրա
գարգացման նախնական շրջաններում։

¹ H. Marr — к изучению современного грузинского языка, Петр. 1928 թ. էջ 19

² A. Meillet — Les langues dans l'Europe nouvelle, Paris, 1928 թ. էջ 107.

³ Հր. Աճառյան — Պատմություն հայոց նոր գրականության. Վաղարշապատ, 1906 թ.,
էջ 87.

Գրական լեզուն հանդիսանում է հասարակության այ միայն գրավոր, այլև՝ բանավոր հաղորդակցման միջոցառումը կամ վերաբարձրացման կիսաարվեստական ընդհանուր լեզուն իր բազմազան ֆունկցիաներով, որոնց մեջ կարելի է հիշառակել գործարարական, դիվանագիտական, արագրական, ուղեգրական, հրապարակախոսական, եկեղեցական, գիտական, դպրոցական, պետական-վարչական հարաբերություններին, ինչպես և զեղարվեստական գրականությանը ծառայելը և այլն։ Այսպես օրինակ, դերմանական ազդային լեզուն նախքան գրականության լեզու դառնալը, երկար ժամանակ իբրև գրական լեզու ունեւ գերազանցապես դիվանագրական-գրասենյակային, (Բավարիայի ու Սաքսոնիայի արքունիքներում), ինչպես և կրօնական-եկեղեցական և ինտելիգենցիայի միջբարձրացման բանավոր հաղորդակցման ֆունկցիաներ։ Գերմանական ազդային գրական լեզուն իր ուղեգիրն ստացավ ոչ թե վիպասանից կամ բանաստեղծից, այլ ռեֆորմացիայի գործիչ Լութերից՝ շնորհիվ «Աստվածաշնչի» թարգմանության։ Ռուսաց ազգային գրական լեզուն ևս սկզբնական շրջանում եղել է գերազանցապես դիվանագրական-գրասենյակային լեզու։ Պարտադիր չէ, որ բոլոր ազգերը իրենց գրական լեզուն սկսեն զեղարվեստական գրականությունից, ինչպես իտալական ազգը։ Ընդունելով, որ գրականության լեզու լինելը ազգային գրական լեզվի ֆունկցիաներից միայն մեկն է՝ ես անհրաժեշտ եմ համարում վերանայել մեր ազգային գրական լեզվի՝ արևելյան գրական աշխարհաբարի սկզբնավորման հարցը։

Այսօրվա նյութը չդարձնելով հայոց պատմության, ինչպես և հայ գրականության պատմության պերիոդիզացիայի մինչաշխարհային բազմաթիվ թեմաները և սխտեմները (յուրաքանչյուրն ունի յուր առավելություններն ու թերությունները), հարկ եմ համարում միայն մատնանշել, որ մենք բոլորովին չունենք պերիոդիզացիայի վերաբերյալ հատուկ տեսական գրականություն, և ոչ իսկ մեկ հոդված։ Մեր գրականության մեջ չի պարզաբանված պերիոդիզացիայի հիմնավորման անհրաժեշտությունը և էությունը, և լավագույն դեպքում մենք ունենք ավելի կամ պակաս հաջողված կոնկրետ շրջանաբաժանում (հին շրջան, միջին շրջան, նոր շրջան, նորագույն շրջան), բայց ոչ հիմնավորված տեսություն այդ շրջանաբաժանումների և յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունների։ Միակ հատուկ ուսումնասիրությունը, որ նվիրված է հայոց գրականության պատմության պարբերացման հարցերին. պրոֆ. Լ. Մելիքսեթբեկի «Հայոց գրականության պատմության պերիոդիզացիան» վրացերեն աշխատությունն է (1934 թ. Թբիլիսի), որի մեջ բավական հետաքրքիր և մեծ չափով ճիշտ են չուծված հարցերը։ Մակայն ուղ աշխատությունն էլ լիպպես չի բավարարում ու չի կարող ելակետ լինել լեզվի պատմության պերիոդիզացիայի համար, թեև չեմ ժխտում նրա օգտակարությունը ընդհանրապես, և ինձ համար՝ մասնավորապես։

Արևելյան գրական աշխարհաբարի պատմության պերիոդիզացիան, քանի դեռ չունենք մեր հասարակության տնտեսական-քաղաքական պատմության, ինչպես և գրականության պատմության մարքսիստական պերիոդիզացիա, ես փորձում եմ կատարել՝ ելակետ ընդունելով ընկեր Ստալինի կողմից ազգության որոշման համար տրված չորս հիմնական հատկանիշները։ ա) տնտեսական կյանքը, որի հետ նկատի եմ առնում գասակարգա-

յին փոխհարաբերություններն ու առաջատար դասակարգը.

բ) անբիաորիան.

դ) հոգեբանական կազմը, որի մեջ նկատի եմ առնում նաև գիտակցականության մոմենտը լեզվի հարցերի նկատմամբ.

դ) լեզվի հասարակական ֆունկցիաները, որակը և լեզվական բախումները:

Հետ այսմ արևելյան դրական հայերենի պատմությունը ես բաժանում եմ հետևյալ շրջանների.

I. Կազմավորման շրջան՝ 17—18-րդ դարեր:

II. Ձևավորման շրջան՝ 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվերը:

III. Դասական շրջան՝ 70-ական թվերից մինչև 1920 թվականը:

IV. Սովետական շրջան՝ 1920 թվից ի վեր:

Առաջին շրջան՝ 17—18-րդ դարեր. — Արևելահայ բարբառների արտահայտություններ կարելի է, իհարկե, գտնել նույնիսկ գրաբար գրականության մեջ, սկսած դասական շրջանից, ինչպես և վիմական արձանագրությունների, միջնադարյան տաղերգության և ամբողջ միջին հայերենում ու դրական այլ հուշարձանների մեջ 13-րդ դարից ի վեր, սակայն այդ արտահայտությունները նրանց մեջ որակ չեն կազմում և մնում են իբրև բարբառային ներթափանցումներ, այդ իսկ պատճառով չեն կարող դիտվել իբրև արևելահայ դրական աշխարհաբարի սկիզբը նշող տվյալներ: Արևելյան դրական աշխարհաբարը իբրև որակապես նոր լեզու՝ գրաբարից, միջին հայերենից ու բարբառներից տարբեր, հանդես է գալիս միայն 17—18-րդ դարերում, ուստի և նրա պատմությունը պետք է սկսել այդ ժամանակից:

17—18-րդ դարերը, ազդային ազատագրական պայքարի և վերածնության շրջանն են մեր իրականության մեջ, որը սկզբնավորվում է 1639 թվի թուրք-պարսկական դաշնադրությանը հաջորդող երկարատև խաղաղությունից: Այդ շրջանում նկատելի են տնտեսական ապաքինում, քաղաքների զարգացում, դազութա-րնաշխարհային կապիտալի ծաղկում, քաղաքացության դերի ուժեղացում, ազդային ինքնագիտակցության զարթոնք եվրոպական իդեոլոգիական ներգործության տակ և ազդային-ազատագրական շարժումների շարան: Եվրպատոսի և Հնդկաստանի հայ բուրժուան, Ջուղայի ու Երևանի խոջան, Ղարաբաղի մելիքն ու Թրիլիսուս մոքալաքեն Պֆալցի կուրֆյուրստի ու Պետրոս առաջինի, 'Լախթանզ, Թեյմուրազ ու Հրեկլե վրաց թագավորների և անգլիական ու ֆրանսիական արքունիքների օժանդակությամբ, հայ հոգևորականության օրհնությամբ և հայ գյուղացիության աջակցությամբ տարված էին ազդային-ազատագրության զաղափարով, անկախ կամ քրիստոնեական հովանավորությամբ հայրենիք ձեռք բերելու զաղափարներով: Դրաբար լեզուն այդպիսի մասսայական, ժողովրդական շարժման հաղորդակցման հիմնական կամ միակ միջոցն չէր կարող լինել: Որովհետև նրա տարածումը սահմանափակ էր եմատչելիությունը՝ սակավ: Շահամիրյանը անդրադետ գրաբարով գրում էր իր երազած նոր Հայաստանի եվրոպաաիպ կոնստիտուցիան (սկզբնապես փառացած), Ազուլեյի անգրագետ Ջաքարիան՝ տրանզիտային վաճառականը, թոթով աշխարհաբարով շարադրում էր յուր օրագրությունը, Ղարաբաղի մելիքներն ու հոգևորականները աշխարհաբար ուղերձներ էին դրում ու-

սաց և վրաց արքունիքներին և Պետրոս առաքինի ու վրաց թագավորների ստորագրությամբ ու կնիքներով աշխարհաբար նամակներ, հրամանագրեր ստանում այնտեղից. Սայաթ-Նովայի նախորդը վրաց արքունիքում՝ Նազաշ Նոնիաթանը հչ միայն գրաբարը, այլև՝ միջին հայերենը մի կողմ թողած՝ սկսեց արևելյան աշխարհաբարով հորինել իր գեղեցիկ ազգերը, արտա-
նահմանյան մայրաքաղաքներում ու քաղաքներում (Ամասերգամ, Վենե-
տիկ, Մադրաս և այլն) ազգերովում էին առաջին աշխարհաբար գրքերը (գործնական առևտրական ձեռնարկներ, ազգաբաններ և այլն), և վերջա-
պես 1711 թվին Ամասերգամում լույս տեսավ արևելյան աշխարհաբարի առաջին քերականությունը բազմաթիվ նմուշներով. որոնց մեջ՝ և չորս պատկերով պիես Ադուլիսի կյանքից. Արևելյան գրական աշխարհաբարը կազմավորվում, ուժի էր կանգնում՝ դառնալով հայ հասարակական դար-
գացման կարևոր լծակ ու ազդակ. Այդ շրջանում նոր լեզվի հասարակա-
կան ֆունկցիաները գերազանցապես գործնական-գործարարական էին. Նոր լեզուն կազմավորվում էր տարերայնորեն, առանց գիտակցական պայքարի
գրաբարի դեմ և առանց գիտակցական մշակման ու որևէ կոգնիտիվման. Այդ պատճառով էլ նա գեղեստանկազմակերպ էր ու անմիտորենակ. նրա
կազմավորման աղբյուրներն էին.

ա) աշխարհաբարացող գրաբարը,

բ) աշխարհաբարացող միջին հայերենը,

գ) գրականացող բարբառները:

Սա մեր լեզվի պատմության կազմավորման շրջանն էր՝ նրա պատմու-
թյան առաջին փուլը: Այս շրջանի հատկանշական կողմերն էին.

ա) տեղիտեղիտիկ — տեղայնացման չգոյությունը.

բ) դառնակարգային — խոշոյական առևտրական կապիտալի. հայ ազ-
նրվականության ու հայ հոգևորականության միասեղ հավաքական գործու-
նեությունը.

գ) հոգեբանական — ազգային ինքնագիտակցության դարձնալը և ազ-
գային-ազատագրության ձգտումը.

դ) լեզվակազմ — գործնական-գործարարական ֆունկցիաներ, տարերա-
յին զարգացում, գիտակցական պայքարի բացակայություն, որակի անմշա-
կություն:

Այս շրջանը տևում է մոտավոր 17—18-րդ դարերը.

Երկրորդ շրջան՝ 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվերը. —

19-րդ դարի առաջին տարվանից Վրաստանը, յուսուցնալով Անդրկովկասը
միակցվում է Ռուսաստանին, և Արևելահայերը անջատվելով Արևմտահայ-
քից պետականորեն ու կոգնիտիվումով՝ վերջնականապես կապում է իր
բախտը ուսու մոզովրդի հետ: Այս շրջանը ազգային ինքնահանաձման, ազ-
գային զաղափարախոսության ու ազգային լեզվի գիտակցական մշակման
շրջանն է. Արևելահայ գրական լեզուն ոչ միայն տեղայնանում է Ռուսաստանում
ու անդառնալիորեն անջատվում արևմտահայ գրական լեզվից, չնայած արև-
մտահայերի ակաթիվ մասնակցությունը արևելահայ կյանքին, այլև՝ գրոհում
գրաբարի վրա՝ մահու ու կենաց մարտի ելնելով սրա դեմ. ծավալվում է
ներքին անդուլ պայքար, հանգես են դալիս հակամարտ ուժեր (պահպանո-
ղականներ ու առաջադիմական-լուսավորականներ). կազմավորվող լեզուն
որ գեղեստանկ է բարձր մշակույթից և իր ձեռքով եւ է մեծ թվանդա-

կույթունից, մի կողմից՝ արագ թափով զարգանում, Եվրոպականացում է՝ նմանվելով ռուսերենին ու եվրոպական լեզուներին, մյուս կողմից՝ պայքարում է իր օրինական իրավունքների համար և իր աեղը առանձնացնում արևի տակ՝ կովելով գրաբարի դեմ ու վերջնականապես հաղթելով նրան:

Սա մեր լեզվի պատմության երկրորդ շրջանն է՝ ձևավորման փուլը, որի համար հատկանշական է.

ա) տերիտորիալ — տեղայնացում Ռուսաստանի սահմաններում՝ Մոսկովա, Պետերբուրգ, Աստրախան, Նախիջևան, Թբիլիսի, Դորպատ կենտրոններով:

բ) դասակարգային — ռուսահայ առևտրական բուրժուազիայի առաջատարությամբ, գյուղական ու քաղաքային դեմոկրատիայի աջակցությամբ պայքար կղերա-ֆեոդալական պահպանողականության դեմ:

գ) հոգեբանական — ազգային լուսավորության, դպրոցական կրթական և կուլտուրական բարենորոգումների գաղափարների գերիշխանություն. ազգային ինքնություն ու թարգմանական գրականության տարբեր ժանրերի ստեղծում:

դ) լեզվական — լեզվի մշակում, լեզվաշինություն ու գրապայքար, հաղթանակ գրաբարի դեմ:

Այս շրջանը ես բաժանում եմ երկու ենթաշրջանի, որոնք հիմնական ընդհանրություններով հանդերձ ունեն և գալի տարբերություններ:

Նախաեյուսիսափայլյալն ենթաշրջան, որի ընթացքում գրապայքարը և լեզվաշինարարությունը տարվում են չկազմակերպված ձևով, և լեզուն դեռևս բավական անմիօրինակ է. կատարվում են մշակման ուղիների որոնումներ (Աբովյան, Պատկանյան և այլն)՝ չկա կազմակերպված մամուլ ու հրապարակախոսություն, որին սովորաբար փոխարինում են զրքերի առաջաբանները (Աբովյան, Նազարյան, Նալբանդյան և այլն), զանազան գրություններ ու նամակներ:

Հյուսիսափայլյալն ենթաշրջան, որի ընթացքում տարվում է կազմակերպված լեզվաշինարարություն ու գրապայքար ընդդեմ պահպանողական ուժերի ու գրաբարի: Այս ենթաշրջանում պայքարի մեջ բուրժուազիային զգալի չափով օգնում է մանր բուրժուազիան, թեև նկատվում են արդեն և նրանց հակադրման սաղմերը: Լեզուն բավական միօրինակ է (Նալբանդյան, Նազարյան, Տեր-Հովհաննիսյան, Սադաթյան, Շահազիզ, Բարխուդարյան և այլն) և գորգանում է ոչ միայն մամուլի ու հրապարակախոսության, այլև դպրոցի ու ծաղկող գեղարվեստական գրականության մեջ:

Երրորդ շրջան՝ 19-րդ դարի 70-ական թվերից մինչև 1920 թ.

Սա արդյունաբերականացող և արդյունաբերական կապիտալիզմի շրջանն է. ազգային շարժման առավել տեղայնացումով Անդրկովկասի սահմաններում, Թիբլիսի ու Բաքու կենտրոններով և ներազգային դասակարգային ուժեղ բախումներով: դասակարգերը ստեղծվում են իրենց կազմակերպված պարտիաները և պարտիական մամուլը: ազգային հասարակությանը և գրական լեզվին իշխող բուրժուազիայի դեմ կանգնած է հետդեմոկրատիկ ու քաղաքականապես կազմավորվող քաղաքային ու գյուղական դեմոկրատիան, աշխատավորությունը՝ ղիշուններ պահանջելով վերջնականապես հաղթանակած գրական, քաղաքային, նազարյան-նալբանդյանական լեզվից հօգուտ բարբառների: Լեզուն միօրինակ է. բայց բազմերանգ ըստ

ժանրերի (մամուլ, վիպասանություն, գյուղամետ և քաղաքային պոեզիա, պրոլետարական պոեզիա, դեկադանս ու սիմվոլիզմ, դրամա և կենցաղային կոմեդիա, ուսումնական-դիտական գրականություն և այլն), նա ձեռք է բերում նոր ֆունկցիաներ (գլխից, թատրոն, քաղաքական կյանք և այլն) և առավել զարգանում, հղկվում ու ժողովրդականանում ինտելիգենցիայի լայն խավերի մեջ։ Այս շրջանում փորձեր են արվում խառնելու գրական լեզվի միասնականությունը և արհեստականորեն նախապատվություն տալու գյուղացիական բարբառային լեզվին, որի նպատակն էր զիջադրել բուրժուազիային և ժողովրդայնություն պատվաստել մեր գրական լեզվին (օր. Թումանյանի տեսությունը)։

Սա մեր լեզվի պատմության երրորդ շրջանն է, լեզվի դասակարգումը։ Որի համար հատկանշական են.

ա) տերիտորիալ—շարժման խոշոր տեղայնացում Անդրկովկասի սահմաններում, Թրիլիսի և Բաքու կենտրոններով։

բ) դասակարգային—բուրժուազիայի առաջատարություն, որին հակադրվում է քաղաքային և գյուղական դեմոկրատիան։

գ) եռգերանակում—ներազգային դասակարգային պարտիական պայքարի գաղափարներ, բանվորական, ռեվոլյուցիոն, պրոլետարական շարժումներ, ինտերնացիոնալիզմի ու նացիոնալիզմի պայքար։

դ) լեզվական—լեզվի հետագա մշակում ու հղկում տարբեր բնագավառներում, արձակի ու չափածոյի կլասիկ լեզվի կերտում (Բաքի, Մուրացան, Նար-Դոս, Թումանյան, Բահակյան, Տերյան), լեզվի լայն տարածում ինտելիգենցիայի մեջ։

Այս շրջանը նույնպես բաժանում է մերկու ենթաշրջանների։

Նտեյուսիսափայլյան ենթաշրջան (1870-ական թվերից մինչև 1900-ական թվերը), երբ լեզուն մշակվում է բազմազան բնագավառներում և զգալի չափով ժողովրդականանում ինտելիգենցիայի մեջ, հանգես է գալիս նացիոնալիզմի ու ինտերնացիոնալիզմի պայքար լեզվաշինարարության մեջ հատկապես բառափոխությունների գծով։ զգացվում է ռուսաց լեզվի ուժեղացող ազդեցությունը։ լեզվական կուլտուրան բարձրանում է և գառնում ազնվատ ժամանակի գաղափարաստության ու գրականության ժակարդակին։

Նախաքովետական ենթաշրջան (1900-ական թվերից մինչև 1920 թվերը), որի ընթացքում հանգես է դալիս գյուղացիական ու պրոլետարական զգալի հակադրություն բուրժուազիային ու նրա գրական լեզվին (Թումանյան, Հակոբյան)։ լեզվի ձևը և կուլտուրան հասնում են կատարելության։ իմպերիալիզմի արշավի սպառնալիք տակ պարտվում է ազգի և ազգային կուլտուրայի ու ազգային լեզվի հեռանկարը։

Չորրորդ շրջան՝ 1920 թվից ի վեր. — Սա սովետական, սոցիալիստական շրջանն է, պրոլետարիատի առաջատարության և նրա իշխող իդեոլոգիայով, լեզվի տերիտորիական տեղայնացումով Հայկական ՍՍԽ-ում և պետական կարգավորմամբ. առաջին անգամ հայոց լեզուն գառնում է պետական լեզու և ձեռք բերում նոր ֆունկցիաներ (պետական-վարչական, գատարանական, բուհական, գիտական-փիլիսոփայական, տեխնիկական, գյուղատնտեսական, արդյունաբերական և այլն)։ լեզուն ենթարկվում է պետական կարգավորման, մշակման ու կոնսոլիդացիայի։ վերանում է բարբառների հա-

կազրությունը, և նրանք առաինանաբար աեզի են առիս գրական-ժողովրդական-միասնական լեզվի առաջ. լեզուն դառնում է համաաարած ժողովրդական, գյուղի ու քաղաքի աշխատավորների արաազրության, աշխատանքի և պայքարի հիմնական լծակը, հիմնովին վերանորոգվում են լեզվի իմաստաբանությունը, բառաշարը և ուղղագրությունը. նկատվում է ոռւսաց լեզվի առավել ուժեղ ազդեցությունը. լեզվի ձևը միառժամանակ եա է մեռւմ բովանդակությունից, բայց հեաո բարձրանում է և մոտենում արազաթափ առաջ գնացող բովանդակությանն ու ընդհանրապես սովեաական բարձր կուլաուրային:

Ահա մաաավորապես այն, ինչ որ շաա համառոա, կոնսալեկաիվ ձեով կարելի է նախապես հազորդել արդի հայոց լեզվի պաամության իմ. առաջարկած պերիոդիզացիայի մասին: Յանկալի և օգաակար եմ համարում, որ մեր պաամաբանները, դրականագետներն ու լեզվաբանները արաահայավեն աբժաբժված հարցերի շուրջը: